



64. ԴԱՅԱՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Մե մարթ ու կնիկ են հրնում: Ըստոնք ջահել ժամանակը հիրար սիրեր ին ու հիրար առան: Հրմա դու արի տես, որ էս մարթի կնիկը հրեխա չըբերեց: Մարթը Ասսուց շատ դժգոհ էր. «Ես ոչ մեկի վատություն չեմ արե, ճամփիցս դուս չեմ էկել, Ասսու պատվիրանն էլ պահեի եմ, բա հրնչի՞ ա ընձի պատժում ու մե հրեխա չի տալում: Մարթի ուրախությունն հրեխեն ա, սերունդը հրեխով ա շարունակվում: Ես ու կնիկս պուպուլի նման նստում ենք տունը: Մե դուռ բացող էլ ա չըկա»: Էս մարթը ախ էր քաշում ու ծուխը գազաթից դուս էր գալըմ: Էս մարթը մտածում էր, հրմա կնգան չէր քյողղում, բան չէր ասըմ, հիրա սիրածն էր: «Կարող ա ես եմ մեղավոր», — մտածում էր էս մարթը:

Կնիկն էլ հիրա տեղին էր տանջըվըմ. «Ախ, ես եմ պաճառը, որ սիրածս տանջըվըմ ա, ես եմ չոր կոճ, իմ արգանդն ա չորցե»:

Մե օր էլ մարթին ասավ. — Բալո՛ ջան, իմ աչկի լուս, էս տասը տարի ա պսակվեի ենք, հրեխա չունենք, ես չըբեր եմ, դու մեղավոր չես, արի բաժանվենք, թո քո ծուխը չըկղրվի իմ պաճառով: Դու նոր կնիկ բե՛ր, հրեխա ունեցի՛, անբախտ չըմնաս, ես եմ անբախտը, ես էլ կէթամ, մե հրեխատեր որբեվերի մարթի կառնեմ, ընդրա հրեխեքով կուրխնամ, թե չէ էսենց տանջվելով բան դուս չի գա: Դու սաղ օրը չես խոսում, հոքոց ես քաշում, տանջվում ես, ես էլ էթում եմ թավեն, նստըմ լալըմ եմ:

Բալոն հիշկաց կնգան, աչկերը լցվան, բան չըխոսաց, թողեց դուս էկավ: Կնիկն էլ նստավ լացավ:

Գնաց դուսը, մե քիչ նստավ, էլի մտավ տունը, տեսավ՝ կնիկը լալըմ ա: Հինքն էլ սկսեց լացը:

Լացը որ վերջացրին, կնիկն ասավ. — Բալո՛ ջան, գնա մե եթիմ հրեխա բե՛ր, պահենք:

Էտ հրեխով կըմխիթարվենք, մեր բախտն էլ էտենց ա, ի՞նչ անենք, Ասսու կամք ա:

Բալոն էլի ձեն չըհանեց, թողեց դուս էկավ:

Որ Բալոն դուս էկավ, կնիկը հիրա մեջը որոշեց. «Թողեմ էթամ հերանցս տունը»:

Հավաքեց չորերը ու գնաց: Չնայած հերը, ախպերները հոժար չէին, որ բաժանվի, հրմա հինքն ասավ.—Ես եմ սիրե, ես եմ առե, ես էլ բաժանվում եմ, թե չեք ուզում, որ ձեր տանը մնամ, կըգնամ քաղաք, մեկի լվացքը կանեմ կարբեմ:

—Ա՛յ ախճիկ,—ասավ հերը,—ես ըտու համար չեմ ասում, տունը լիքն ա, քյասիբ չենք, հրմա մարթից բաժանվելը լավ բան չի: Դոր հիմի էրկուսով իք, հիմի Բալոյին մինակ թողել էկել ես, էն էլ մեխկ ա, է՛:

Բալոն տեսավ, որ կնիկը գնաց, որոշեց նոր կնիկ առնի. «Ես դուս չեմ արե, բան չեմ ասե, չեմ տփե, որ հինքը գացեր ա, թո էթա»:

Գնաց տանը մնացած մե ախճիկ առավ: Էս կնիկն էլ, որ տեսավ մարթն ամուսնացավ, հինքն էլ գնաց մարթի: Էս մարթի կնիկը մեռել էր, օխտը խմորուտող եթիմ ին մացե: Մտածեց, որ էտ կնիկը չըբեր ա, հիրա ուզածն էլ էտ ա: Կնիկն էլ մտածում էր, որ հինքն էրեխա չի բերում, էտ էրեխեքով կըմխիթարվի, հալլա մոր նման կըպահա:

Մե տարի ետը էս չըբեր կնիկը էրկու տղա բերեց: Գիշեր էր, չըհասցրին տատմեր էլ կանչել: Հիրանք պորտը կղրին, էրեխեքը փաթըտին, դրին էն յանը: Մարթը սկսեց ծծղալ:

—Կնի՛կ ջան, դարդ չանես, որտեղ օխտը, էնտեղ իննը:

Կնիկը մե յանեն ուրախ էր, որ հինքը մեղավոր չի էրեխա չունենալու համար, մե յանեն էլ տխուր էր, որ հիրա սիրած մարթը խայտառակվրմ ա:

Մարթին ասավ.—Ա՛յ մարթ, դու օխտն ունես, մեկն էլ հիմի ութը, բեր էս մե տղեն տանք Բալոյին, մեխկ ա:

—Ո՞նց տանք, գուցե չի՞ ուզըմ:

—Օրը ամառ ա, տաք ա, բեր էրեխեն փաթըթենք մե չորի մեջ, տար դի՛ր Բալոյի ակուշկի հառեչը, կըվերցնեն, թե չեն պախի, գնա ասա՛. «Որտեղ ութը, էնտեղ էլ իննը, էրեխեն տվեք»:

Մարթը տարավ դրեց ու փախավ: Էտ հրուպերն Բալոն քնած չէր, տեսավ, որ ակուշկի հառաչովը մեկը փախավ: Դուս էկավ, բարուր ա դրուկ: Վերցուց բերեց տունը, կնգան զարթնցուց: Ղոնդաղը բացին, տեսան՝ տղա ա: Դեսից-դենից չորեր բերին, ղոնդաղը լավ փաթըթին, դրին ստուին:

Ինչ Բալոն ա, ուրախ ա, որ Աստված տղա ա տվե, ինչ կնիկն ա, նիյաթ ա, բան չի խոսըմ:

Լուսը բացվավ: Գեղում տարածվավ, որ Բալոյի էրկու կնիկն էլ տղա են բերել:

Բալոն կնգան ասավ.—Սոնե՛, էրեխին կովի կաթով կանա՞նք պահի:

Կնիկը ժանգոնները կախեր էր, չէր խոսում, հըմա, որ մարթը հարցը կրկնավ, կնիկն աչկերը խփեց, ճոռթուկ բերանը բացեց. — Ես հուրիչի բիճը պահող չեմ, ոնց ուզըմ ես, արա՛: Ով ա հիմանում, թե որ բողն ա բերե քցե մեր դռան հառաչը, հարցուփորց անենք, մորը գտնենք, տանենք, հիրա բիճը հիրան սեցնենք:

Դես-դեն, խոսք-խաբար, հիմացան, որ Բալոյի հառաչի կնիկը մե տղա ա բերել: Բալոն տղեն վերցուց գնաց հառաչի կնգա մարթի մոտը, պատմեց, որ էս էրեխեն բերե-քցե բն, կնիկն էլ չի պահըմ:

— Թող քո կնիկը պահա՛, էրեխեն ծծի կաթ ուտա, ինչ-որ ծախսն ա, ես կըքաչեմ, իմ ամենալավ Տիմուշկ կովն էլ կըբերեմ էս-տեղ, կթեք, թո քո էրեխեքն էլ ուտեն, իմ աստվածատուր տղեն էլ:

— Որտեղ ութը, էստեղ իննը, Բալո՛ ջան, թող մնա:

Լտուց ետը Բալոն ամմեն շափաթ էթում էր տղին տենում, շա-քար, չայ, էրեխեքին կանփերտ էր տանում, կովը տարավ: Սիրտը էրեխի վրեն շատ տաք էր: Ինչ որ առնըմ էր հիրա տղի համար, էն էլ առնըմ էր էն մեկէլի համար:

Կնգա համար էլ դեյրի կտոր առավ:

Կովի կաթը էրեխեքի վրեն էկավ: Կաթը խմելով բոլոր էրեխեքն էնենց չաղացան, թմբլիկացան, որ դու գիդաս, ոնց որ դըբըռ: Մե տարվա մեջ սկսան վազնել, տոճկալ:

Թող ըստոնք ըստեղ մեծանան, մենք խաբարը տանք Բալոյի երգորթ կնգանեն:

Մե օր էլ մարթին ասավ. — Դու սերըտ քցեք ես էն բճիի վրա, հէքուց-էլլօր կըբերես, տանտեր կըդարցնես, ես կըդառնամ խորթ մեր: Խորթ մոր պատիվը կըրվի, ինչ կըրվեր ա: Ես էտ բանին հա-մաձայն չեմ, դու պտի էտ էրեխից ձեռ քաչես: Էրեխա չունես, բան չըկա, ինչ անենք, Ասսու կամք ա, պտի ենթարկվենք:

— Որ պտի Ասսու կամքին ենթարկվենք, էնա Աստված տվեր ա, ենթարկվենք, էլի:

— Էտի բիճ ա, բճին ոչ կնքում են, ոչ էլ պատիվ տալում, կըմե-ծանա, բոլորը «բիճ» կասեն: Դու կըդառնաս բճի հեր, ես էլ՝ մեր: Աչկա լուս: Զէ՛, էտ հըլնելու բան չի: Բեր տունտ-տեղտ, աբրուստդ գրա՛ իմ վրեն, մե տեղ աբրենք, չես գրի՛ ես կըթողեմ կէթամ, մարթ կառնեմ, քո նման չոր կոճ չեմ:

Էս խոսքերը մարթի սիրտը դաղին, ասավ. — Ա՛յ Սոնե, գուցե դու ընձանից չուտ ես մեռնըմ, ես ոնց աբրուստը գրեմ քո վրեն, քո մեռնելուց հետո հերտ, ախպերներտ կըգան, իմ տանը տեր կըդառ-նան, ես կըհընգնեմ քուչեքը: Էտ մեկ: Երգորթը՝ իմ կնիկը տասը տարի հետո աբրավ, մե օր «չոր կոճ» չասավ, էս մե տարվա մեջը էտ խոսքը դու քսան անքամ ասել ես, ձեն չեմ հանել: Հիմի տու-

նը-տեղը գրեմ քո վրեն, դու դառնաս տանտեր, ես մնամ անտեր: Ճամփետ բաց ա, հուր ուզում ես, գնա:

Կնիկը էս խոսքերին չէր սպասում, ձենը քցեց, Բալոն փետր վերցեց, մե լավ դնգրստեց ու դուս արավ, մե բան էլ չըտվեց:

—Դե գնա մա'րթ առ, երեսուն տարի տանը մնացիր, վրետ հիշ-կող չըհելավ, հիմի՞ կըհիչկեն:

Բալոն վեր կացավ, դուզը գնաց տերտերի մոտը: Կանչեց տեր-տերին, քյոխվին, մե թուխտ գրել տվեց, որ հիրա տունը, արքուս-տը, անասունները տալում ա հիրա տղին:

—Տղիտ անունն ի՞նչ ա, Բալո', ասա', գրենք:

Բալոն կայնավ, տղեն անուն չունեք: Տղի անունը դրին Ասատուր: Թուխտը գրին վերչացրին, բերին էտ մարթին, կնգան, իննը էրեխին դրին էս տան մեջը, Բալոն գլոխ—արև վերցուց ու գնաց: Փող ուներ, փողը հետը տարավ: Բալոն հո՞ւր գնաց, ի՞նչ հելավ, ոչ մե տեղե-կություն չըկար: Կնիկը Բալոյին շատ էր սիրում, ամեն օր մարթից ու էրեխեքից գաղտնի, նստում լնլում էր: էս կնիկը հիրանն էլ էր մեղադրում, որ եթե հինքը Բալոյից չըբաժանվեր, Բալոն չէր էթա:

Ախր սրտով սիրածն էր, է, կորցնելը դժվար ա:

Բալոն գնաց: Հուր ա էթըմ, հինքն էլ չի հիմանըմ: Գլոխը տնգե էթըմ ա, ախ ա անըմ, լնլըմ ա:

Գնաց, գնաց, տեսավ՝ ճամփեն բաժնրվում ա, դառնըմ էրկու: էս էրկու ճամփի մեջտեղը նստեր ա մե Բափել: Բափելը որ Բալոյին տեսավ, գլոխը բանցրցուց:

—Բարե', Բափե'լ հայրիկ, —ասավ Բալոն:

—Այ Ասուր հազար բարին քեզի, ո'վ մարթ:

—Բափե'լ հայրիկ, կարելի՞ ա մե քիչ նստեմ, հանգստանամ, հախարիցը ջուր խմեմ, էլի ճամփես շարունակեմ:

—Կարելի ա, որթի'ս, նստի'ր, քո դարդ ու ցավը Բափելին հայտ-նի ա, նստի'ր, հանգստացի'ր:

—Այ Բափել հայրիկ, ես նոր եմ գալըմ, ոչ մեկի էլ չեմ ասել, դու որտեղի՞ց ես հիմացել:

—է, որթի'ս, Աստված Բափելին ասըմ ա, որ Բափելն էլ հիրան դիմողին ուղիղ ճամփա ցույց տա: էստեղ նստեր եմ մարթկանց ճամփա ցույց տալու համար, որթի':

—Բափե'լ հայրիկ, էս ճամփեքը թբա հո՞ւր են էթըմ:

—էս մե ճամփեն էթացողը, որթի', դառնում ա հարուստ մարթ, էս մեկէլ ճամփա էթացողը հիրանը դայաղ ա քթնըմ: Հիմի որ ճամ-փով ուզում ես, գնա', ես էլ բան չունեմ ասելու:

—Բափե'լ հայրիկ, «դայաղ» հասկանըմ եմ՝ ինչ ա, հենց ընձ էլ մե դայաղ ա պետք, հարուստ դառնալ պետք չի, գնամ, որ մե դա-յաղ, հենարան քթնեմ:

—Դա քո գործն ա, որթի՛ս, ոնց որ կուզես:

Բալոն լվացվեց, ջուր խմավ, հելավ շարունակեց ճամփեն: Շատ գնաց, թե քիչ, հիրկունը հասավ մե քաղաք: Հարցրեց, թե որդեղ խան կա, որ գնա խանը: Ճամփեն նշանց տվին, գնաց էտ խանը: Գիշերը քնավ, հառավողը հելավ գնաց քաղաքը ման գալու՝ համ ծանոթանալու, համ էլ մե հարմար գործ քթնելու: Գնաց բազառը, ետո արհեստավորների թաղերը, մտավ էս քաղաքի խաս բախճեն մեշո նստավ, էլի հիրկունը էկավ էտ խանը, հաց կերավ ու հելավ պարկավ: Գիշերվա կեսին քնուկ էր, թե գարթուն, մե ձեն հընգավ անգաճը: Մութը տեղ էր, ճրաք չըկար, աչկերը բացեց, անգաճները սրեց, որ լավ լսա, տենա՝ ի՞նչ են խոսում:

Ըստոնք էրկու հոքի ին, մեկն ասավ. —էս մարթը էրկու օր ա ըստե ա, ոչ խերի ա խառնվում, ոչ էլ շաոփ, շատ էլ տխուր ա, էրեւում ա, որ դարդի տեր ա: Բոլորը խոսում են, ծծաղում, հինքը ձեն չի անում: էտ մարթին հարգավոր ա մե ճամփա ցույց տալ, թո էթա, մե տեղ քթնի, մե ամիս աշխատա, քաղաքին լավ ծանոթանա, ետո հիմնական տեղ քթնի ու մնա աշխատի:

Մեկէլն էլ ասավ. —Լավ մարթ ա, բան չունեմ ասելու, թո էթա մե փոնչու մոտ աշխատա, խմոր շաղա, աբրի, աշխատողի համար ամոթ չի, թո խմոր անել էլ սովորի, որ հիմանա, թե կնանիքը ոնց են տանջվում:

Բալոյին թողեցին գացին մեկէլի մոտը կայնան:

—էս մարթը ախկատ մարթ ա, թողեր ա կնիկ, էրեխա, փախեր ա, որ էրեխեքի լացի ձենը չըլսա: Շատ մեխկ ա, հինքն էլ անոթի մեռնում ա, ի՞նչ անենք:

—Մոտա փող կա, վերցրո՛ւ մե քիսիկ ոսկի, դի՛ գլխի տակը, կըզարթնի, կըվերցնի, բան-ման կառնի, ետ կըդառնա, կէթա տունը: Քիսիկը դի՛ գլխի տակը, թելը կամանց կապա՛ կոճակից, որ չըկորցնա:

Ոսկին դրին, գացին:

—էս մարթը, որ պարկուկ ա փափուկ տեղաչորի մեչ ու մեռելի նման քնուկ ա, ավազակ ա, ամեն տեղ սարսափ ա տարածե, հըմա հէսօր վերչ ա հըլնելու: Կգան, կըբանդարկեն, դատ անելուց ետո կըսպանեն:

—էսօր բոլ ա,—ասավ հընգերը,—լուսը բացվելուն էլ մոտ ա, էթանք, հէքուց էլի կըզանք:

Գացին:

Ըտոնք որ գացին, Բալոն կամանց էկավ էտ ախկատի մոտը, զարթնցուց, անգաճին փստփստաց, ասավ հիրա լսածը, ոսկին

դնել տվեց ջերբը, պարկան: Էտ խոսքի վրեն ին, իրեք զինված մարթներս մտան, ավագակին բռնին, թևերը կապին հետևից, տարան:

Լուսը բացվավ, Բալոն էս ախակատին խրատ տվեց, որ ոչ մեկի բան չասա, բանը-ման առնի, էթա տունը:

Էս մարթն ասավ.—Անծանոթ ախպեր, արի էթանք բազառը, օքտա առնեմ, չլկեմ էթամ, կարող ա ես սխալ անեմ, ով ա հիմա-նում, մե օյին գա գլոխս:

Բալոն ըստրան բերեց, կնգան, էրեխեքին չոր առավ, ուտելիք առավ ու ճամփու դրեց, ետո հինքը գնաց հիրա գործին: Գնաց կայ-նավ մե հացի փոի դռան մոտը:

Փոնչուն բարեց, ասավ.—Փիթի չունե՞ս, մե հատ փիթի ու-տեմ:

—Ո՞նց է, էնենց փիթի ունեմ, մատներտ էլ հետը կու-ղես,—ասավ փոնչին ու փիթու բերանը բացեց:

Բալոն նստավ, մե փիթի կերավ:

Փոնչին տեսավ, որ էս մարթը օտարական ա, հարց-րեց.—Ախպե՛ր, էրեւմ ա, օտարական ես, խեր հըլնի գալտ: Տխուր ես, հո մե դարդի տեր չե՞ս, ասա՛, գուցե օքտեմ:

—Ձէ՛, փոնչի՛ հայրիկ, դարդի տեր չեմ, հըմա նոր ա էկե էս քա-ղաքը, ծանոթ չունի, մե ամսով գործ ա ուղում անի:

—Արի իմ փոռումը խմո՛ր չաղա, էսքան էլ ոռճիկ կըտամ, գիշերն էլ էնա թախտի վրեն կըպարկես, թե ուղում ես:

Բալոն սկսեց աշխատել: Ինչ խմոր ա անում, ինչ հաց են թխըմ: Ժողովուրթը դարձավ թրա էս փուռը: Թխելով չեն հասցընում, օչերեդ են կայնում հաց առնողները: Փոնչին Բալոյին շատ սիրեց, ոռճիկը հավելացրեց: Էս փոռումը Բալոն մեկ-էրկու ամիս աշխա-տեց, հըմա չընայած լավ էր աշխատում, բայց սիրտը աշխատան-քի վրեն տաք էր: Ախր խմոր անելը կնգա գործ ա, հինքը 30-31 տարեկան տղա, ամոթ ա, եթե տղամարթի գործ քթնի, աշխատա: Փոնչին շատ խնթրեց, որ մնա, հըմա Բալոն չըմնաց, ոռճիկը վեր-ցուց, չնորակալ հելավ ու գնաց:

Գնալու ժամանակ փոնչին ասավ.—Բալո՛ ջան, թե մեր քաղա-քը մնաս, մեկ-մեկ արի խոսանք, թե գործ էլ չես քթնի, էլի արի՛ էստեղ:

—Շնորակալ եմ քո լավության համար, փոնչի՛ հայրիկ, դու տեղ տվիր, կերակրիր, էտ ես չեմ մոռանա:

Էս փոռում աշխատելու ժամանակը Բալոն ծանոթացեր էր մե դարփնի հետ: Դարփինը ոռճիկ էր նշանակե, Բալոն գնաց էս դարփնի մոտը, սկսեց աշխատել:

Հառավոտից հիրիկուն չաքուչ ա խփրմ, քրտինքը վրովից կաթրմ ա, հըմա էլի աշխատրմ ա:

«Ա՛յ էսի տղամարթի գործ ա, թե չէ կպել եմ խմոր անելուց: Էստեղ ես դարփնություն էլ կըսովորեմ, գուցե պետք կըգա, արհեստ հիմանալը վատ բան չի, չիմանալն ա վատ»:

Բալոն էս ուստի մոտը աշխատեց քսան տարի: Ուստեն շատ էր հավանե Բալոյին: Աշխատող, խելոք, աշկաբաց, ձեռիցը մաքուր, էսենց մարթ աշխարքումը քիչ կըճարվի:

Մե օր էլ Բալոյին ասավ. — Բալո՛, ջան, ես ծերացեր եմ, տղա չունեմ, ունեմ մե ախճիկ, մարթը մեռավ, էլ մարթի չըգնաց: Դե ես որ կնիկ չունեմ, պահող չունեմ, ախճիկս ասում ա. «Իմ հորը թողեմ, ով պահա, որ ես մարթի էլթամ: Իմ հերը ընձի պահե, մեծացրեր ա, ես էլ պարտավոր եմ ծերության ժամանակ հորս պահեմ»: Արի ամուսնացի՛ իմ ախճկա հետ, իմ աբրուստն էլ, էս դարփնոցն էլ քեզի: Դու էլ էս քանի տարի ա, տենըմ եմ՝ կնիկ չունես, լվացող-թափող չունես, հընդանիք չունես, քառասուն տարեկան մարթ ես, անհընդանիք, անզավակ մնալը լավ չի, արի քարը փեշիցդ թափա՛, Նազանուս հետ ամուսնացի՛, աբրի՛:

Բալոն պատասխանում ա. — Ուստա՛ հայրիկ, լավ ես ասըմ, բան չունեմ ասելու, խորհուրթդ ծնողական ա, հըմա ես չեմ ամուսնանա, հընդանիք չեմ կազմի, որոշեր եմ էսենց մնալ: Ինչ վերաբերում ա Նազանուն, Նազանին ընձի քուր, ես Նազանուն ախպեր, դու էլ մեզի հեր:

Էս խոսքի դեմ էլ ուստեն ի՞նչ ասեր, խոսալուն վերջ տվեց, հըմա ուստի սիրտը շատ կողբավ, որ Բալոն հրաժարվավ: Էս խոսակցությունից ետո էլ շարունակեցին աշխատել, հըմա ուստեն շատ էր ծերացե, էլ հառաչվանը չէր: Համարյա սաղ գործը Բալոն էր կատարում:

Մե օր էլ ուստեն ասավ. — Բալո՛, որթի՛ս, դու ընձանե լավ ուստա ես: Հին ուստեն պարտավոր ա աշակերտի համար գործիքներ, արհեստանոց պատրաստա: Ես էլ չեմ կանում աշխատել, էս բոլորը քեզի: Թող իմ դարփնոցը չըփակվի, քյուրեն կրակ վառվի, չաքուջի ձենը գա, ես ըտըրանով կըմխիթարվեմ:

— Ձէ՛, — ասավ Բալոն, — քանի դու կաս, էս արհեստանոցի վերակացուն ես, ես էլ՝ քո աշակերտը, ընձի արհեստանոց պետք չի: Արհեստանոցի տերը սաղ հըլնի:

Ուստեն զարմանում էր, թե էս ինչքան մաքուր մարթ ա: Էտ խոսակցության ժամանակ մե ջահել տղա էկավ, նստավ դարփնոցի հառեջը: Դարփինը դուս էկավ, որ հիմանա՛ ինչ տղա ա, դարփնոցը բլավ:

Տղեն տեղից վեր թռավ, վազան էն յանը, որտեղից Բալոն ձեն էր տալըմ.— Հասե՛ք, գերանն ընձի ճգմեց:

Էկան գերանի մե ծերից վերցին, հըմա Բալոն տակից չի կանըմ դուս գա, ոտները ցավից թուլցեր են:

Էտ ժամանակ ուստեն ասավ.— Տղա՛ ջան, դու մեջքով գերանին դայաղ հելի, ես աչակերտիս քաչեմ դուս բերեմ:

— Դայա՞ղ, — լսաց Բալոն, — Բափեղի ասածը կատարվավ, էս տղեն դայաղ ա հըլնում, որ ես ազատվեմ: Էս տղեն Աստու հղրկածն ա:

Դարփինը Բալոյին քաչեց դուս բերեց, չորերը թափ տվին, ֆայտոն բերին, Բալոյին տարան տուն: Նազանին Էկավ, տեղաչոր սարքեց, չայ չինեց, Բալոն ու էս տղեն խման, Բալոն պարկավ: Տղեն ուզեց էթա, հըմա Բալոն չըթողեց:

— Տղա՛ ջան, էսօր մա՛ց մոտս, իմ ազատողը դու ես, ես քո հետ պտի խոսամ:

Տղեն ձեն չարավ, մնաց Բալոյի մոտը:

Հիմի տենանք, թե որն էր էս տղեն:

Բալոյի էթալուց ետո էս երգրումը սով հընգավ: Սովը՝ մե յանից, հիվանդությունը՝ մե յանից: Գեղը դառտակվավ, մե 50-60 մարթ մնաց: Բալոյի առաչի կնիկը մնացած էրեխեքից գախտնի ձեռն հընգած թիքեն տալըմ էր Ասատուրին:

— Թող իմ Ասատուրը մնա, գուցե հերը գա գլխի:

Մարթն էլ մեռավ, էրեխեքն էլ մեռան, մնացին մերն ու Ասատուրը: Մերն էթում էր չոլը, կանանչ, խանդող, կուճղես, բերում էր, տղին պահըմ: Էս տեսակ Ասատուրին պահեց դարցրեց քսան տարեկան: Որ դարցավ քսան տարեկան, աչխատեց, մորը պահում էր: Մերը Ասատուրին մե օր ասավ, որ Ասատուրը հեր ունի, նշանց տվեց թխտերը: Ասատուրն էս որ հիմացավ, հելավ աստըվորով:

Մորն ասավ.— Ոնց որ հըլնի, պտի էթամ, հորս քթնեմ, հիմի ծերացեր ա, դարցեր ա հիսուն տարեկան:

Մերը բան չասավ, ուզում էր, որ Ասատուրն էթա, հորը գլխի, բերա: Ճամփի հաց թխեց, տղին ճամփեց: Արամը մորից հիմացավ հոր անունը, նշանները: Բռնեց հոր գնացած ճամփեն ու գնաց:

Ծատ գնաց, թե քիչ, հասավ էն Բափեղին: Տեսավ Բափեղն էն-քան ծեր ա, որ վրեն հալ չըկա: Բարև տվեց, բարև առավ, իրավունք առավ, որ նստի, հանգստանա:

— Բափե՛ղ չայրիկ, էս ճամփեքն հո՞ւր են տանում:

— Էս մե ճամփով էթացողը դառնում ա հարուստ մարթ, էս մե ճամփով էթացողը կորածն ա քթնում, հիմի, որթի՛, որով ուզում ես, գնա՛: Զահել ես, գնա՛ էս ճամբով, դարցի՛ր հարուստ մարթ, աբրի՛:

—Ձէ՛, Բափե՛լ, ես կորած ունեմ, էս ճամփով կէթամ:

—էտ էլ քո գործն ա, տղա՛ ջան,—ասավ Բափելը:

Ասատուրը գնաց էտ ճամփով, հասավ դարփնոցի հառեչը, էտ դեպքը պատահավ:

Որ դարփինն ու հիրա ախճիկը գնացին, Բալոն սկսեց տղի հետ խոսալ, էս տղի այվալաղն հիմանալ:

Ասատուրին հարց տվեց.—Տղա՛ ջան, ի՛մ ազատարար, անունտ ինչ ա:

—Ասատուր ա:

—Որտեղացի՞ ես:

—էս ինչ գեղից:

—Հո՞ւր ես էթըմ:

—էթըմ եմ հորս քթնեմ:

—Հո՞ւր ա գացե հերտ:

—Ձեմ հիմանում, քսան տարի հառեչ ընձի տվե մեր հարեանի կնգան, արբուստը գրեր ա իմ անունով, հինքը գնացեր ա: էտ ժամանակ ես մե քանի օրական տղա եմ հելե, մերս մեռեր ա, հորս էլ չեմ տեսե:

—Մորտ անունն ի՞նչ ա:

—Մորս անունը չեմ հիմանում, հըմա էն կնիկը, որ ընձի մերու-թյուն ա արե, անունը Սարեթ ա:

—Ե՞րփի ես էկել էս քաղաքը:

—Երեկ:

—Գիչերը որտե՞ղ քնար:

—էս ինչ խանը:

—էստեղ հո քեզի բան չըպատահավ:

—Մե զարմանալի բան պատահավ:

—Ի՞նչ զարմանալի բան:

Ասատուրը պատմեց, թե ոնց խանի մեչ պարկած ժամանակ էր-կու մարթ էկան խոսացին:

—Ի՞նչ խոսացին, Ասատո՞ւր ջան:

—Մեկն ասավ. «էտ տղեն, որ քնած ա պատի տակը, հորն ա կորցրել, կըքթնի, էս կողմի մարթը էլի ջահել ա, սիրածին ա ման գալըմ, կորցրեր ա, շատ կըտանջվի, հըմա կըքթնի, էս մեկն էլ գող ա, սութ քուն ա տվել, որ ըստոնք քնեն, ջերերը դարտակա»:

—Բա ի՞նչ անենք,—ասավ մեկը:

—էս գողին էստեղից դուս անել տանք:

—Ո՞նց:

—Գողը լսաց. «Հիմի որ չէթա, ոստիկան բերել տանք»: Գողը որ ոստիկանի անունը լսաց, հելավ ու փախավ: Լուսը բացվավ,

Հելա քաղաքը ման գալու, վերջը ձեզի Հանդիպա, էս ա իմ պատմությունը:

— Էս յանը որ էկար, էրկու ճամփի մեջտեղը նստուկ Բափելին Հանդիպա՞ր, Բափելը բա՞ն չասավ:

— Ասավ, ոնց չէ, ասավ, որ էս ճամփով էթացողը կորածը կըքթնի, ես էլ էկա, որ հորս քթնեմ:

— Հորտ չես տեսե, չես ճանչնում, ո՞նց կըքթնես, ա՛յ տղա:

— Բափելը որ ասում էր՝ կորածը կըքթնի, ուրեմն՝ կըքթնեմ:

— Հորտ անունն ի՞նչ ա:

— Մերացուս ասավ, որ Բալո ա:

— Իմ անունն էլ Բալո ա, հըմա ես քո հերը չեմ: Արի հէքուցվանից էս քաղաքի հետ հաշիվներս մաքրենք, ուստից էլ շնորակալություն հայտնենք ու էթանք: Ես քո մորն էլ, հորն էլ ճանաչում եմ:

— Դու հիվանդ ես, Բալո՛ քեռի, ո՞նց կըզնանք, մե քանի օր մնանք, լավանաս, հետո էթանք: Ես էլ մե գործ կըճարեմ, յոլա կըզնամ, մինչև դու լավանաս:

— Գործ ճարել պետք չի, Ասատո՛ւր ջան, ես քսան տարի ա աշխատել, պահել եմ, վերցրո՛ւ, ծախսա՛, մա՛ն արի, մինչև ոտերիս ցավն հընցնի:

Մե քանի օր ետո Բալոն Հելավ ոտի: Տղին լավ ծանոթացրեց քաղաքի հետ, տղի ու մոր համար լավ-լավ հաքուստ առավ, ուստից էլ շնորակալ հելան ու հընգան ճամփա: Գացին հասան Բափելի տեղը, տեսան Բափել չըկա: Էրկուսն էլ շատ տխրան, որ էտ տեսակ լավ մարթը մեռեր ա ընթամենը էս մե քանի օրվա մեջը ու հիրանք չըտեսան, որ շնորակալություն ասեն:

Իրեք օր հետո տուն հասան: Սաբեթը քսան տարուց հավելի Բալոյին չէր տեսե, բայց որ տեսավ, ճանչցավ, փաթթվան հիրար: Ասատուրը շատ զարմացավ, որ հիրա մերացուն փաթթվավ էս մարթի հետ, հըմա բան չասավ. «Ի՞նչ կա որ, կարող ա հառաչ հիրար սիրեր են», — մտածեց Ասատուրը:

— Մարե՛, էս քեռին ասըմ ա, որ հորս կըքթնի:

— Է՞ս քեռին ա ասըմ:

— Հա՛, էս քեռին:

— Էս քեռին քո հերն ա, Ասատո՛ւր ջան:

Հեր ու տղա փաթթվան հիրար:

Հընցավ մե ժամանակ, մարթ ու կնիկ որոշին տղին ամմեն բան դուզն ասեն: Ասին:

— Վատ չի, մե մեր, էրկու հեր, — ծիծաղեց Ասատուրը:

Ըտոնք հասան հիրանց մուրաղին, դուք էլ հասնեք ձեր մուրաղին: